Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 359 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուր, Մեծ Պարնի և Սպիտակ բնակավայրերում սոցիալապես անապահով ընտանիքներին արտոնյալ պայմաններով տրամադրել արևային ջրատաքացուցիչներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	«Լիթլ բրիջ Սվիթսերլանդ» հասարակական կազմակերպություն, Նախագահ՝ Հիլդե Ադեհայդ Քինդ, Շվեյցարիա (Ձիաքոմետտի ստասսե 134. 7000 Քուր, ՖՕ0569480):
4.	Ծրագրի կատարողը	«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակեր-պություն, իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Ջ. Սարկավագի 129/5, ՀՎՀՀ՝ 01003187, հեռ՝ 010-516-044
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուր, Մեծ Պարնի, Սպիտակ և Ծաղկաբեր բնակավայրեր: Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 8,291,750 (ութ միլիոն երկու հարյուր ինսունմեկ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուր, Մեծ Պարնի, Սպիտակ և Ծաղկաբեր

		բնակավայրերի բնակիչները, որոնց ընտրությունը կատարվում է կազմակերպության կողմից, ուսումնասիրությունների արդյունքում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	08.05.2022 թ.-ից մինչև 28.08.2022 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ընտրված ընտանիքների հետ կնքվում են փոխառության պայմանագրեր, որի արդյունքում ձևավորվելու է շրջանառու ֆոնդ՝ ուղղված նույն նպատակին՝ արևային ջրատաքացուցիչ համակարգերի ձեռքբերմանը և նույն պայմաններով գյուղական համայնքների անապահով ընտանիքներին տրամադրմանը: Կնքվելու են փոխառության եռակողմ պայմանագրերը՝ «Շտիգեն» ՍՊԸ-ն որպես վաճառող, «Կամրջակ» ՍԲՀԿ-ն որպես գնորդ-փոխատու և շահառուն որպես գնորդ-փոխատու, ամեն մի բնակավայրի ներկայացուցիչի կամ ղեկավարի ներկայությամբ: Պայմանագրերի բուն էությունը, առանց ԱԱՀ-ի համակարգի սահմանված ջրատաքացուցիչների գինը 32 ամիսների ընթացքում առանց որևէ ավելացումների վերադարձն է: Պայմանագրերն ստորագրելուց հետո շահառուն վաճառողի հետ ֆինանսական որևէ հարաբերություն չի ունենալու, և գումարի վերադարձման հարցում կողմ է հանդիսանալու «Կամրջակ» ՍԲՀԿ-ն: Արևային ջրատաքացուցիչները ձեռք բերելու համար կնքվել է պայմանագիր 25 հատ ջրատաքացուցչի համար՝ 8,291,750 դրամի չափով, տեղադրման միջոցառումները կկատարվեն ծրագրի իրականացման ժամկետում:
10.	Ձեռք բերվող, ներմուծվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	25 հատ արևային ջրատաքացուցչի ձեռք բերում՝ 8,291,750 միլոն դրամի չափով: Տեղադրվելու են 300 - լիտրանոց արևային ջրատաքացուցիչներ: Յուրաքանչյուր ջրատաքացուցիչը

		տեղադրվում է առավելագույնս 10 օրվա ընթացքում, և ամբողջ քանակությունը կտեղադրվի ծրագրի իրականացման ընթացքում: Ձրատաքացուցիչները հինգ տարով սպասարկման և թերությունների վերացման երաշխիքի ներքո են լինելու և անխափան աշխատելու համար ունենալու են թերությունների վերացման եռօրյա արձագանքման պայմանագիր:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

18.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ